



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 2011 թվականի N 1930 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1768-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Հավանություն տալ Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների ղեկավարներին՝

1) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 3-րդ աշխատանքային օրը համակատարողը միջոցառման համար պատասխանատու մարմին է ներկայացնում ծրագրում ընդգրկված միջոցառումների կատարման ընթացքի մասին հաշվետվություն.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 8-րդ աշխատանքային օրը պատասխանատու մարմինը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում ծրագրում ընդգրկված միջոցառումների կատարման ընթացքի մասին հաշվետվություն՝ բացառությամբ այն միջոցառումների, որոնց պատասխանատու մարմինը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունն է: Հաշվետվությունը

պետք է պարունակի մանրամասն տեղեկատվություն բոլոր միջոցառումների (իրականացված կամ իրականացվող) և դրանց ազդեցության մասին, մասնավորապես, պետք է ներկայացնել միջոցառման կատարման արդյունքում ընթացակարգերի, դրանց ժամկետների և (կամ) ծախսի կրճատման մասին տեղեկատվություն:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ ամփոփել ներկայացված եռամսյակային տեղեկատվությունը և մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-րդ աշխատանքային օրը կատարված աշխատանքների ընթացքի մասին հաշվետվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 1768-Ն որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. փետրվարի 7
Երևան



Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Առաջարկվող միջոցառումը	Նպատակը	Իրականացնող մարմինները		Կատարման ժամկետը
			պատասխանատու մարմինը	համակատարողը	
1	2	3	4	5	6
1. Հարկերի վճարում					
1.1.	ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական կայքում և ՊՈՍ-տերմինալներով հարկերի վճարման հնարավորության ստեղծում	Հարկերի վճարման համար ծախսվող ժամանակի կրճատում և ֆինանսական հոսքերի թափանցիկության ապահովում	ՀՀ ԿԱ ՊԵԿ	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	01.06.2012 թ.
1.2.	1. Հայաստանի Հանրապետությունում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման եւ գրանցման գրքերի էլեկտրոնային վարման հնարավորության ստեղծում, ՓՄՁ-ների համար էլեկտրոնային համակարգի մշակում և ներդրում	Հայաստանի Հանրապետությունում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման և գրանցման գրքերի վարման ժամկետների և ծախսերի կրճատում	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՀ էլեկտրոնային նախարարություն	01.11.2012 թ.
	2. ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) մասին» N315 որոշումն ուժը կորցրած ճանաչել	Արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքերի լրացման վրա ծախսվող ժամանակի և ֆինանսական միջոցների խնայում	ՀՀ ֆինանսների նախարարություն	01.04.2012 թ.	
1.3.	Մինչև տարեկան 58.3 մլն.շրջանառություն ունեցող տնտեսավարողների համար էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման համար խրախուսման մեխանիզմների մշակման և ներդրման, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության իրակա-	Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման լայնամասշտաբ կիրառում, հաշվետվությունների ներկայացման համար անհրաժեշտ ժամանակի և ծախսի կրճատում	ՀՀ ԿԱ ՊԵԿ	ՀՀ ֆինանսների նախարարություն	01.04.2012 թ.

1	2	3	4	5	6
	նացում և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն				
1.4.	Միջոցառումների իրականացում, որոնց արդյունքում տարեվերջին գործող հարկ վճարողներից ստացված հարկային և պարտադիր սոցիալական վճարների մասով հաշվետվությունների 40%-ից ավելին կներկայացվեն էլեկտրոնային եղանակով:	Հարկային հաշվետվությունների ներկայացման վճարման համար ծախսվող ժամանակի կրճատում:	ՀՀ ԿԱ ՊԵԿ		30.12.2012 թ.
1.5.	1. ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ ԱՎԾ-ին հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման հնարավորության ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն	Հաշվետվությունների պարբերականության կրճատում	ՀՀ ԱՎԾ ՀՀ ԿԱ ՊԵԿ		01.03.2012 թ.
1.6.	1. Հարկային իրավախախտումների համար նախքան տնտեսվարողներին վարչական պատասխանատվության ենթարկելն առաջին անգամ նախազգուշացման պրակտիկայի ներդրման նպատակով միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն	Հարկային մարմինների հետ տնտեսվարողների փոխհարաբերության նոր մշակույթի ներդրում, իրազեկվածության բարձրացում	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ԿԱ ՊԵԿ	01.03.2012 թ.
	2. Առաջարկությունների հիման վրա ըստ անհրաժեշտության «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխությունների կատարում				01.08.2012 թ.
1.7.	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքի օրենսդրություն բաժնում իրավական ակտերի դասակարգում ըստ յուրաքանչյուր հարկատեսակի: Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի, այդ թվում նաև գերատեսչական ակտերի համախմբում	Տնտեսվարողների համար իրազեկվածության և հասանելիության ապահովում	ՀՀ ԿԱ ՊԵԿ		01.06.2012թ.
1.8.	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ՀՀ ԱՎԾ-ին և ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց	Տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության թափան-	ՀՀ ԿԱ ՊԵԿ	ՀՀ ԱՎԾ (համաձայնությամբ)	01.07.2012 թ.

1	2	3	4	5	6
	պետական ռեգիստրի գործակալությանը տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ըստ 5-նիշ մակարդակի)	ցիկլության ապահովում		ՀՀ արդարադատության նախարարություն	
1.9.	Անցում կատարել առևտրի և ծառայությունների ոլորտի ՓՄՁ սուբյեկտների գործունեության ամսական արդյունքների վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակներին (ընտրանքի գործիքին)	ՓՄՁ-ների կողմից ՀՀ ԱՎԾ-ին ներկայացվող հաշվետվությունների ներկայացման պարբերականության և ծախսերի կրճատում	ՀՀ ԱՎԾ (համաձայնությամբ)		01.04.2012 թ.
1.10.	Ակտիվների խմբավորմամբ («pooling») հաշվեկշռային նվազող ամորտիզացիայի համակարգի ներդրում:	Շահութահարկով հարկման նպատակով ամորտիզացիոն մասհանումների կատարման համակարգի կատարելագործում	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ ԿԱ ՊԵԿ	30.12.2012 թ.
2. Արտաքին առևտուր					
2.1.	<p>1. Համապատասխանության գնահատման մասին ՀՀ օրենքում փոփոխության կատարում համաձայն որի՝</p> <p>- հավատարմագրման հայտատուին ներկայացվող պահանջներում կսահմանվի, որ հայտատուն որպես սերտիֆիկացման մարմին հավատարմագրվելու համար պարտավոր է ունենալ ներմուծված և արտադրված արտադրանքի սերտիֆիկացման հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգ</p> <p>2. Մաքսային գործընթացում ներառված բոլոր մարմինների (սերտիֆիկացնող մարմին, սննդի անվտանգության պետական ծառայություն) միջև տեղեկատվության փոխանակման ապահովում</p>	Ներմուծման և արտահանման գործընթացների պարզեցում, արագացում և դյուրինացում և դրանց հետ կապված ծախսերի նվազեցում՝ համակարգչային կատարելագործված «մեկ-պատուհան» համակարգի ներդրման միջոցով	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ՀՀ ԿԱ ՊԵԿ	01.04.2012 թ.

1	2	3	4	5	6
2.2.	<p>Երկակի նշանակության ապրանքների արտահանման ընթացակարգերի բարելավում, մասնավորապես, ապրանքների երկակի չհանդիսանալու հավաստումը առանց պարտադիր փորձաքննություն իրականացնելու նպատակով ինքնահայտարարագրման այլընտրանքային համակարգի ներդրման համար եվրոմիության փորձի ուսումնասիրություն և համապատասխան առաջարկությունների մշակում</p>	<p>Ապրանքների երկակի չհանդիսանալու հավաստումն առանց պարտադիր փորձաքննություն իրականացնելու նպատակով ինքնահայտարարագրման այլընտրանքային համակարգի ներդրում</p>	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p>		<p>01.07.2012 թ.</p>
2.3.	<p>Ինքնահայտարարագրման ինստիտուտի կատարելագործում, ըստ որի՝</p> <ul style="list-style-type: none"> ➢ Ապրանքների ինքնահայտարարագրման համար անհրաժեշտ ծածկագրեր կտրամադրվեն որակավորված մասնագետներին, ➢ որակավորման քննությունները կկազմակերպվեն ամսական պարբերականությամբ՝ միայն թեստերով 	<p>Ինքնահայտարարագրման գործընթացի հստակեցում և խոչընդոտների վերացում, տնտեսավարող սուբյեկտների կողմից ինքնուրույն մաքսային մարմիններին ներկայացվող մաքսային հայտարարագրերի տեսակարար կշռի ավելացում</p>	<p>ՀՀ ԿԱ ՊԵԿ</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>01.04.2012 թ.</p>
2.4.	<p>Իրականացնել մաքսային օրենսգրքի և այլ իրավական ակտերի վերանայում, դրանցում փոփոխությունների, իսկ անհրաժեշտության դեպքում, նաև նոր ակտերի նախագծում՝ մաքսային արժեքի որոշման ընթացակարգի բարելավման համար: Մասնավորապես՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ Պետական եկամուտների նախարարության 2001 թ. փետրվարի 26-ի թիվ 02/207 հրամանի 1.2.1 կետի վերանայում և համապատասխանեցում ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասին՝ հանելով ՄՀ.1 ձևի պարտադիր ներկայացման պահանջը, 2. ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասում հստակ սահմանել ներկայացված մաքսային արժեքի հետ մաքսային մարմինների 	<p>Մաքսային արժեքի որոշման գործընթացի բարելավում, մաքսային ձևակերպումների գործընթացի պարզեցում և դյուրինացում և դրա համար պահանջվող ժամանակի և ծախսերի կրճատում</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>ՀՀ ԿԱ ՊԵԿ</p>	<p>01.04.2012 թ.</p>

1	2	3	4	5	6
	<p>անհամաձայնության հիմքերը և լրացուցիչ պահանջվող մանրամասն տեղեկատվության ցանկը,</p> <p>3. ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասում «հինգ օրյա» ժամկետը կրճատել և սահմանել «2 օր»,</p> <p>4. ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել դրույթ, որով կսահմանվի, որ Մաքսային մարմինների կողմից սույն մասով սահմանված ժամկետում նշված մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունման կամ մերժման վերաբերյալ համապատասխան որոշում չկայացնելու դեպքում հայտարարատուի կողմից ներկայացված մաքսային արժեքը համարվում է ընդունված</p>				
2.5.	<p>Մանրամասն հետազոտության (վերլուծության) իրականացում պարզելու, թե ֆինանսա-տնտեսական տեսակետից որքանով է արդարացված ներմուծման ընթացքում մաքսային արժեքի որոշման՝ ներկայումս կիրառվող իրական գործելակերպերը (մասնավորապես, գնահատել կողմնորոշիչ գների կիրառումը, գնահատել գործարքի գնի եղանակի ավտոմատ չկիրառման օգուտներն ու վնասները, ինչպես նաև հետևանքները Հայաստանի տնտեսության վրա), արդյունքների և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն</p>		ՀՀ ԿԱ ՊԵԿ	ՀՀ ֆինանսների նախարարություն	01.04.2012 թ.
2.6.	<p>ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 21-ի N 1779-Ն որոշման մեջ փոփոխության կատարում, որով կվերանայվեն մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության մաքսատներում՝ որպես արտաքին տնտեսական գործունեության մասնակից գրանցվելու համար անհրաժեշտ և</p>	<p>Հայաստանի Հանրապետության մաքսատներում՝ որպես արտաքին տնտեսական գործունեության մասնակից գրանցվելու համար ներկայացվող փաստաթղթերի կրճատում և գրանցման ընթացակարգի պարզեցում</p>	ՀՀ ԿԱ ՊԵԿ	ՀՀ ֆինանսների նախարարություն	01.04.2012 թ.

1	2	3	4	5	6
	լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող անձանցից պահանջվող փաստաթղթերը				
3. Ընկերության հիմնադրում					
3.1.	Բոլոր իրավական ակտերից հանել տնտեսավարողների կողմից կնքված փաստաթղթեր ներկայացնելու պահանջը	Ընկերությունների գործունեության ընթացքում կնիքի հետ կապված ժամկետների և ծախսերի կրճատում	ՀՀ արդարադատության նախարարություն		01.04.2012 թ.
3.2.	Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	E-registry համակարգի կիրարկման համար անհրաժեշտ իրավական հիմքերի ապահովում	ՀՀ արդարադատության նախարարություն		30.12.2011 թ.
3.3.	ՀՀ պետական կառավարման մարմիններին «Client Treasury» համակարգի միջոցով լիցենզիաների և այլ թույլտվությունների ստացման, ինչպես նաև պետական տուրքերի դիմաց ՀՀ քաղաքացիների կողմից կատարված վճարումների հավաստման հնարավորության ստեղծում	Քաղաքացիների և պետական մարմինների միջև շփումների և փաստաթղթային պահանջի նվազեցում	ՀՀ ֆինանսների նախարարություն		01.03.2012 թ.
4. Շինարարական թույլտվություններ					
4.1.	Շինարարական թույլտվությունների էլեկտրոնային համակարգի ներդրման հայեցակարգի մշակում	Շինարարական թույլտվությունների ստացման համար անհրաժեշտ ընթացակարգերի և ժամանակի կրճատում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն		01.04.2012 թ.
4.2.	E-gov համակարգի միջոցով ՏԻՄ-երում ճարտարապետահատակագծային առաջադրանքի ստացման համար ներկայացվող փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացման հնարավորության ստեղծում (Ֆինանսական միջոցների առկայության դեպքում)		ՀՀ կառավարության աշխատակազմ	ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	30.12.2012 թ. (Ֆինանսական միջոցների առկայության դեպքում)
4.3.	Օրինակելի նախագծերի հիման վրա նախատեսվող շինարարության ընթացակարգերի և ծախսերի կրճատում, մասնավորապես՝ - Օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտների համար պարզեցված	Օրինակելի նախագծերի հիման վրա նախատեսվող շինարարության համար պարզ ընթացակարգի սահմանում, նախագծային փաստաթղթերի մատչելիության ապահովում, ծախսերի	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	01.04.2012 թ.

1	2	3	4	5	6
	<p>ընթացակարգով թույլտվությունների տրամադրում,</p> <ul style="list-style-type: none"> - էլեկտրոնային եղանակով օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտների նախագծային փաստաթղթերի ձեռքբերման հնարավորության ապահովում, - շինարարական աշխատանքների որակի ինքնահավաստման սկզբունքի ներդրում 	կրճատում			
4.4.	<p>Երևանի քաղաքապետարանի կողմից «Մեկ պատուհան»-ի աշխատակարգի համապատասխանեցում եվրոպական չափանիշներին, օգտագործման տեսանկյունից մատչելիության ապահովում (օրինակ՝ փակցնել ցուցանակներ պատուհանների գործառույթների վերաբերյալ)</p>	Շինարարական թույլտվությունների տրամադրման գործընթացի սպասարկման որակի բարելավում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)		01.04.2012 թ.
4.5.	<p>ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի N 130-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխությունների կատարում, որոնց համաձայն խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների ստացման աշխատանքների կատարման փուլը, այդ թվում՝ նաև կատարվող ծախսերի մասով, հստակ կտարանջատվի ծառայությունների մատուցման ընթացակարգային փուլից</p>	Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների ստացման համար սահմանված ծախսերի և ժամկետների հստակեցում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն		01.04.2012 թ.
4.6.	<p>Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում համապատասխան փոփոխությունների կատարում, որոնց համաձայն նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման աշխատանքների կատարման փուլը, այդ թվում՝ նաև՝ կատարվող ծախսերի մասով, հստակ կտարանջատվի ծառայությունների մատուցման ընթացակարգային փուլից</p>	Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ծախսերի և ժամկետների կրճատում	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)		30.12.2011 թ.
4.7.	<p>Միջազգային փորձի ուսումնասիրության իրականացում և առաջարկների ներկայացում էլեկտրականության, գազի և ջրի միացման նպատակով մատակարարներին ՏԻՄ-երի կողմից հողահատկացման համար</p>	Էլեկտրաէներգիայի, գազի և ջրի միացման համար անհրաժեշտ ժամկետների կրճատում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	ՀՀ քաղաքաշինության նախարարություն Հանրային	01.02.2012 թ.

1	2	3	4	5	6
	հստակ և սեղմ ժամկետների սահմանման վերաբերյալ			ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	
5. Պայմանագրերի կիրարկում					
5.1.	Քաղաքացիական և սնանկության գործերով դատավարական ընթացակարգերի վիճակագրության վարում և տարեկան վիճակագրության ներկայացում ՀՀ արդարադատության նախարարությանը՝ համաձայն համատեղ մշակված աղյուսակի	Դատավարական ժամկետների կրճատման նպատակով համեմատություններ կատարելու հնարավորության ընձեռում	ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Շարունակական
5.2.	Միջոցառումների իրականացում, որի արդյունքում «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում ընդգրկված պայմանագրերից ծագող վեճերի լուծման համար անհրաժեշտ 49-ը գործընթացների թիվը կկրճատվի առնվազն դառնալով 30	Պայմանագրերի կիրարկման համար անհրաժեշտ գործընթացների, ժամկետների և ծախսերի կրճատում	ՀՀ արդարադատության նախարարություն		01.04.2012 թ.
6. Վարկերի ստացում					
6.1.	Ընդհանուր նկարագրով վարկերի տրամադրման վերաբերյալ դրույթի օրենսդրական սահմանման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն	Վարկերի հասանելիության բարձրացում	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	ՀՀ արդարադատության նախարարություն	01.03.2012 թ.
	Առաջարկությունների հիման վրա ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների իրականացում, որով կսահմանվի, որ գրավի առարկան կարող է լինել նաև ընդհանուր նկարագրով				01.08.2012 թ.

1	2	3	4	5	6
6.2.	<p>1. Պաշտոնական պարզաբանման տրամադրում, որտեղ կնշվի, որ հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից վարկային բյուրոներին տեղեկատվություն տրամադրելու սահմանափակում չկա</p> <p>2. Հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից վարկային բյուրոներին տեղեկատվություն տրամադրելու սահմանափակման առկայության դեպքում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների իրականացում</p>	Վարկային տեղեկատվության շրջանառության բարելավում	ՀՀ արդարադատության նախարարություն	<p>ՀՀ ԿԲ (համաձայնությամբ) ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների Նախարարություն</p> <p>Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)</p>	<p>01.02.2012 թ.</p> <p>01.04.2012 թ.</p>
7. Ներդրողների պաշտպանվածություն					
7.1.	Իրավաբանական անձանց բաժնետերերի և մասնակիցների ռեեստրում առկա տեղեկատվության առցանց հասանելիության ապահովում	Տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության ապահովում, ներդրումների խթանում	ՆԱՍԴԱՔ ՕԷՄ ԷՔՍ (համաձայնությամբ)	ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	01.07.2012 թ.
8. Սեփականության գրանցում					
8.1.	«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում, որով կպարզեցվեն անշարժ գույքին վերաբերող գործարքների կնքման նոտարական վավերացման ընթացակարգերը	Անշարժ գույքին վերաբերող գործարքների կնքման ընթացակարգերի պարզեցում, նոտարիատի համակարգում «մեկ պատուհանի կանգառ» համակարգի ներդրում	ՀՀ արդարադատության նախարարություն		01.04.2012 թ.
8.2.	E-Notary համակարգի ներդրման ծրագրի տեխնիկական առաջադրանքի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն: Միաժամանակ ներդրման ժամկետների վերաբերյալ առաջարկության ներկայացում		ՀՀ արդարադատության նախարարություն		01.04.2012 թ.
8.3.	Գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման, ինչպես նաև գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվություն ստանալու համար դիմումների՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքէջում առցանց ներկայաց-	Անշարժ գույքին վերաբերող գործարքների կնքման ժամկետների կրճատում	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե		01.04.2012 թ.

1	2	3	4	5	6
	ման հնարավորության ստեղծում				
9. Ձեռնարկության փակում/լուծարում					
9.1.	Մնանկության և լուծարման արդյունքում պարտատերերին և բաժնետերերին ակտիվների վերադարձելիության վերաբերյալ վիճակագրության վարում	Պարտատերերին և բաժնետերերին ակտիվների վերադարձելիության վերաբերյալ տեղեկատվության ապահովում և վերադարձելիության դրույքաչափերի բարձրացում	«Արդարադատության նախարարություն		Շարունակական
9.2.	Հետազոտությունների իրականացում, որի արդյունքում հնարավոր կլինի իրականացնել սնանկության և լուծարման արդյունքում պարտատերերին և բաժնետերերին ակտիվների վերադարձելիության մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ միջոցառումներ	Մնանկության և լուծարման արդյունքում պարտատերերին և բաժնետերերին ակտիվների վերադարձելիության մակարդակի բարձրացում	«Արդարադատության նախարարություն		01.04.2012 թ.
9.3.	Միջոցառումների իրականացում, որոնց արդյունքում կբարձրանա սնանկության և լուծարման արդյունքում պարտատերերին և բաժնետերերին ակտիվների վերադարձելիության մակարդակը				01.05.2012 թ.
9.4.	«Մնանկության մասին» և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքներում փոփոխությունների և լրացումների իրականացում	Մնանկության վարույթում գտնվող իրավաբանական անձանց գույքի օտարման ժամկետների կրճատում, պարտավորությունների մարման նպատակով ակտիվների տնօրինման արդյունավետության բարձրացում	«Արդարադատության նախարարություն	«Հ կոնոմիկայի նախարարություն	01.04.2012 թ.
9.5.	«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Իրավաբանական անձանց լուծարման և անհատ ձեռնարկատերերի հաշվառումից հանելու ընթացակարգերի պարզեցում, ժամկետների կրճատում	«Արդարադատության նախարարություն		30.12.2011 թ.

1	2	3	4	5	6
10. Իրազեկվածության ապահովում					
10.1.	<p>«Ա պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվական քարտեզների մշակման աշխատանքների համակարգում, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> - «Ա պետական կառավարման մարմինների կողմից տնտեսվարողի գործունեությունը պարզեցնելու նպատակով հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով տեղեկատվական քարտեզների մշակում, որոնցում հստակ նկարագրված կլինեն համապատասխան մարմնի կարգավորման ոլորտին առընչվող գործառնությունները և դրանց ընթացակարգերը, նշված կլինեն դրանց իրավական հիմքերը, տևողությունները և արժեքները - Քարտեզների տեղադրում համապատասխան պետական կառավարման մարմնի. ինչպես նաև յուրաքանչյուր ընթացակարգի իրականացման համար պատասխանատու այլ մարմինների կայքերում 	Հասարակության իրազեկվածության բարձրացում և ապահովում	«Ա կառավարության աշխատակազմ	«Ա պետական կառավարման մարմիններ	Շարունակական
10.2.	Ներմուծման և արտահանման քարտեզի տեղադրում մաքսային ծառայության վեբկայքում	Տեղեկատվության հասանելիության ապահովում և իրազեկվածության բարձրացում	«Ա ԿԱ ՊԵԿ	«Ա կառավարության աշխատակազմ	01.04.2012 թ.

1	2	3	4	5	6
10.3.	Նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի (ՀՀ ազգային ստանդարտների, դասակարգիչների, տեխնիկական պայմանների, միջազգային, եվրոպական, տարածաշրջանային, ինչպես նաև այլ պետությունների ստանդարտների) մասին տեղեկատվության տրամադրում, ՀՀ ազգային ստանդարտների, դասակարգիչների, ՀՀ ազգային ստանդարտների կարգավիճակով ընդունված միջազգային, եվրոպական, տարածաշրջանային, ինչպես նաև այլ պետությունների ստանդարտների ձեռքբերման նպատակով պատվերների ընդունման և վաճառքի համար էլեկտրոնային համակարգերի ներդրում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից: Միջոցառման շրջանակներում քննարկել նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի անվճար բեռնման (download) հնարավորության հարցը	Տնտեսվարող սուբյեկտների կողմից արտադրվող արտահանվող և ներմուծվող արտադրանքի և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության ապահովման դյուրինացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Ստանդարտների ազգային ինստիտուտ		01.03.2012 թ.
10.4.	Էլ. հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերի վերաբերյալ հեռուստատեսային նյութերի պատրաստում և տարածում, լայնամասշտաբ իրազեկում:	Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների լրացման ժամանակ հանդիպած հարցերի լուծում և էլ. հաշվետվություններ ներկայացնողների թվի ավելացում	ՀՀ կառավարության աշխատակազմ	ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	Շարունակական
10.5.	Հարկային հաշվետվությունների ձևերում սահմանված տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության տեսակի դասակարգչի (ըստ ՏԳՏՀԴ) վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելուն ուղղված իրազեկման ապահովում ըստ մշակված ծրագրի	Հարկային հաշվետվությունների լրացման ժամանակ անճշտությունների բացառում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՀ ԱՎԾ ՀՀ ԿԲ (համաձայնությամբ)	01.04.2012 թ.
10.6.	Պաշտոնական անվճար իրավական տեղեկատվական համակարգի ստեղծում	Իրավական ակտերի վերաբերյալ պաշտոնական իրազեկվածության ապահովում	ՀՀ արդարադատության նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	30.12.2012 թ. (Ֆինանսական միջոցների առկայության դեպքում)
10.7.	Օրինակելի նախագծերով իրականացվող շինարարության գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում, պաստառների տպագրում և մարզպետարաններում և քաղաքապետարաններում տեսանելի վայրում տեղադրում, նախագծերի կիրառման կարգի և դրանցով շինարարության իրականացման վերաբերյալ խորհրդատվական ձեռնարկի տեղադրում ՀՀ քաղա-	Օրինակելի նախագծերի համար շինթույլտվության ժամկետների կրճատում և շինթույլտվությունների տրամադրման ճկուն համակարգի ստեղծում: Օրինակելի նախագծերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	01.03.2012 թ.

1	2	3	4	5	6
	քաշինության նախարարության կայքում				
10.8.	ՀՀ կառավարության և ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմինների թեժ գծերի հեռախոսահամարները կարճ հաղորդագրության միջոցով (SMS) ծանուցում ազգաբնակչությանը և հեռախոսահամարների թռուցիկների տպագրում	Թեժ գծերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ՀՀ կառավարության աշխատակազմ		01.04.2012 թ. (Ֆինանսական միջոցների առկայության դեպքում)
11. Այլ միջոցառումներ					
	Պետական ծառայությունների օմբուցմենի ստեղծման հայեցակարգի մշակում	Պետության կողմից ծառայությունների մատուցման ընթացքում առաջացած խնդիրների արագ և անկողմնակալ լուծում	ՀՀ արդարադատության նախարարություն		01.03.2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ



Դ. ՍԱՐԳՍՅԱՆ